

ՊԻՈՆ ՀԱԿՈՒՅՑԱՆ-90

Նոյեմբերի 10-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ անվանի գիտնական, հայագետ Պիոն Հակոբյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջոցառում-գրականության ցուցադրություն:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց վերջերս լույս է տեսած «ԱԽԼՑԽԱՆ XII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ» գիրքը՝ խմբագրությամբ Հայկ Հակոբյանի և Անահիտ Հակոբյանի:

Մենագրությունը նվիրված է Ախլցխայի ու մերձակա բնակավայրերի միջնադարյան և նոր պատմությանն ու մշակույթին՝ հատուկ շեշտադրելով նվազ ուսումնասիրված միջնադարյան ժամանակաշրջանը: Գիրքը նախատեսված է աղբյուրագետների, գրականագետների, պատմաբանների, հնագետների, վիճակագրագետների ու ընթերցող լայն հանրության համար:

Բանախոսներ՝

Աելիտա Դոլուխանյան (Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ)

Վարդան Դերիկյան (Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն)

Հայկ Հակոբյան (Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ)

Անահիտ Հակոբյան (Բանասեր)